№ 76 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 7 — 1902 — ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 7 № 76

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Թիֆլիսի օպերայում. Տնայնագործական-արդիւնաբերական ցուցահանդէս Պետերբուրգում. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԵԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Գայլեր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իմինեան Ազգագրական ժողովածու, հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց։ Հատոր Բ. Ժողովրդական վէպ և հէքիաթ։ Հաւաքեց Ս. Հայկունի։ Մոսկվա—Վաղարշապատ, 1901։ Մեծադիր եր. X+447։ Գինն է 1 ր. 25 կոպ.։

Արտաքինով ու ներքինով մի գեղեցիկ գիրք է Իմինեան Ազգագրական ժողովածուի այս երկրորդ հատորը, որ պարունակում է ժողովրդական անգիր բանահիւսութեան 48 կտորներ, որոնցից 6-ը ժողովրդական վէպ, իսկ 42-ը՝ ժողովրդական հէքիաթ։

Ժողովրդական վէպից առաջին երկու կտորը Սասայ ծռերի երկու ճիւղն են կազմում (Սասնասար եւ Բաղդասար, Դաւիթ եւ Մհեր), նոր վարիանտով, Մոկաց բարբառով։ Այս վարիանտը շատ հետաքրքրական է եւ պարունակում է մանրամասնութիւններ՝ որոնք պակասում էին մինչեւ այժմ տպագրված վարիանտներում։ Միւս չորս վէպն էլ նոր են՝ կենցաղական, պատմական եւ դիւցազնական բովանդակութեամբ։ Հէքիաթներից նոր են—որչափ մեզ է յայտնի—միայն 17. մնացածները հին են, մի քանին էլ խառնուրդ հնի եւ նորի։ Սակայն այս բաժանումը չէ կարելի հասկանալ բառացի մտքով. որովհետեւ նորերի մէջ էլ պատահում են հին՝ վաղուց յայտնի հէքեաթային մոտիվներ, եւ, ընդհակառակն, հների մէջ պատահում են նոր՝ դեռ անծանօթ մոտիվներ։ Հէքիաթներից 9-ը առանձնապէս հետաքրքրական են կամ բովանդակութեամբ, կամ իբրեւ յաջող վարիանտներ (№№ 8, 9, 12, 18, 24, 27, 35, 41, 42)։ Բայց եւ միւս հէքիաթները, որոնք այս տեսակէտներից նուազ հետաքրքրական են՝ պահպանում են իրանց նշանակութիւնը ուրիշ զանազան տեսակէտներից, ինչպէս ժողովրդի բարքը, սովորոյթները, աշխարհայեացքը, լեզուն եւ ուրիշ յատկութիւնները ուսումնասիրելու համար։

Լեզուի ուսումնասիրութեան համար մանաւանդ առանձին կարեւորութիւն ունի այս ժողովածուն, որովհետեւ հէքիաթների ամենամեծ մասը գրի է առնված տաճկահայոց՝ մեզ համար դժուարագիւտ բարբառներով, (ինչպէս Մոկաց, Արճէշի, Զարսանճադի, Խլաթի, Բաղէշի եւ այլն)։ Սակայն շատ կտորներ գրի են առնված Զարսանճադի (Դէրտիմցոց) բարբառով (11), այնուհետեւ գալիս են Խլաթի (7), Բուլանըխի (6), Կուլպ գիւղի (5), Ալաչկերտի (4), Մոկաց եւ Արճէշի (3-ական), Բաղէշի (2) բարբառներով, եւ մի-մի հատ էլ՝ Ապարանի, Կոտայից, Խոյեցոց, Ալիճան եւ Գրամբայ գիւղերի, Վանի բարբառներով. մի հէքիաթ էլ գրված է գրական լեզուով։ Ուրեմն ժողովածուն պարունակում է ընդարձակ կամ հատառօտ կտորներ 14 բարբառներով, որոնք մատակարարում են մեծ քանակութեամբ հետաքրքրական նիւթեր հայերէն բարբառների համեմատական քերականութեան (ձեւակազմութեան) համար եւ բազմաթիւ բառեր ու ասացուածքներ։ Բուն ազգագրական տեսակէտից էլ առատ նիւթեր է մատակարարում այս ժողովածուն, որոնց քննութեան մէջ մտնել չենք կարող այստեղ։

Շնորհակալութիւն յայտնելով պ. Ս. Հայկունուն եւ Ազգագրական ժողովածուի խմբագրութեան այս հետաքրքրական հատորի համար՝ աւելորդ չենք համարում մի քանի նկատողութիւններ անել, որոնք եթէ յաջորդ հատորների հրատարակութեան ժամանակ ի նկատ առնուելու լինեն՝ կարծում ենք, գործը աւելի լաւ կը լինի։

Գաւառական բարբառը գրի առնելու համար Ս. Հայկունու ընդունած ձեւը բաւարար չէ։ Մեր ունեցած այբուբենը բաւական չէ գաւառական հնչիւններն արտայայտելու, մանաւանդ ձայնաւորների ու կոկորդային բաղաձայնների համար. ուստի հարկաւոր էր գոնէ մի քանի պայմանական նշաններ գործածել՝ հնչիւնները աւելի ճիշտ արտայայտելու համար, ինչպէս արել է, ի միջի այլոց, հանգուցեալ Ս. Սարգիսեանը Ագուլեցոց բարբառի համար։ Եւ եթէ՝ մեր գործածած մի քանի ուղղագրական ձեւեր, որոնք երկու տեսակ արտասանութիւն ունեն՝ նպատակայարմար չեն գաւառաբարբառի մէջ. օրինակ՝ չէ կարելի գրել անիւ, էաս, սկուն եւ այն, որոնք կարող են կարդացվել երկու կերպով։ Չէ կարելի իւ տառախումբը, որ գրական լեզուի մէջ IO եւ ИВ հնչիւններն ունի՝ գործածել ֆրանսիական U հնչիւնը արտայայտելու համար (ինչպէս՝ անիւ, էրկիւց եւ այլ բառերում)։—Ուղղագրական այսպիսի թերութիւնների պատճառով այս ժողովածուն դժբախտաբար չէ կարող ծառայել բարբառների հնչիւնաբանութիւնը ուսումնասիրելու գործին։ Դարձեալ՝ ցանկալի էր, որ հէնց այս հատորում բացատրված լինէին մի շարք բառեր, որոնք կամ բոլորովին տեղական գործածութիւն ունեն կամ այնքան այլափոխված են, որ անճանաչելի են դարձել։ Օրինակի համար՝ կայօտ են անմիջական բացատրութեան «մոզուած», «ժըրկուել», «փկլուճ», «ժրխօ», «խեչ», «փեանք», «ջլութ» եւ հարիւրաւոր այսպիսի բառեր, կամ այսպիսի խօսքեր «պաուս տուն ջակօլի, ջկէր մօտ ջատուտեն» (407, այսինքն՝ պառաւի տունը չը քանդուի, չը կար մօտը ջատութիւն)։ Այսպիսի բառեր ու դարձուածքներ բացատրված կան այս հատորում, բայց բաւական չեն։—Դարձեալ՝ մենք խորհուրդ չէինք տայ օտարազգի բառերը նօտրագրել, ինչպէս արված է այս հատորում, որ բացի տգեղութիւնից ու չարելու դժուարութիւնից՝ հաղիւ թէ ուրիշ նպատակի կարողանայ ծառայել։ Հասարակ ընթերցողի համար լեզուի մաքրութեան հարցը գոյութիւն չունի, ուստի եւ հետաքրքրական չէ. իսկ բանասէրը, որ կամենայ օտարազգի բառերի գործածութիւնն ուսումնասիրել՝ հարկաւ չի բաւականանայ Ս. Հայկունու ցուցմունքներով, որոնք շատ անգամ թերի են ու սխալ։ Վերջապէս «օտարազգի բառ» հասկացողութիւնը շատ առաձգական է, ուստի եւ զգուշալի է այս-ինչ բառը վճռաբար օտարազգի հրատարակել, իսկ մի ուրիշ բառ, որ նոյնպէս օտարազգի է՝ մկրտել իբրեւ հայերէն բառ։ Մի ցանկութիւն էլ որ վերաբերում է մեր հրատարակութիւններից շատ շատերին.—մեծ բարիք կը լինէր ընթերցողների համար՝ եթէ գրքի թերթերը կարած լինէին։ Թէկուզ սրա համար գրքի գինը փոքր ինչ էլ թանգանար։

Ստ. Մ.

—

Նոր ստացված գրքեր. 1) Հ. Ս. Էփրիկեան—„Ինաշխարհիկ Բառարան“, պրակ չորրորդ, պատկերազարդ, Վենետիկ, եր. 481—640. 2) Franz Nikolaus Fink—„Zeitschrift für armenische Philologie“, Մարբուրգ, 1902. 3) Բժ. Ա. Բուդուղեան—„Վիրաբուժական հիանդութիւն և Օպերացիա“, Պետերբուրգ, 1902, 29 եր. գինը 5 կոպ. 4) „Հաշիւ Բարեգործական Ընկերութեան հայոց Նոր-Նախիջեւանի վասն 1901 ամի“, Նախիջեւան, 1902 եր. 44. 5) Ե. Թ.—„Սահակ Պարթև“, Պետերբուրգ, 1902, եր. 25, գինը 5 կոպէկ. 6) Ա. Շահ-Մուրադեանց—„Ինչ է կանանց նպատակը“, հատոր առաջին, Բագու, 1902, 108 եր., գինը 30 կոպէկ. 7) Խորէն եպիսկոպոս Ստեփանէ—„Երկու եպիսկոպոս, երկու վարդապետ և երկու քահանայ“. Բագու, 1900, եր. 92, գինը 30 կոպէկ. 8) „Ազգային Մատենադարան“, Վիեննա, 1901. ա) Յովսէփ վարդապետ Ամատունեան—„Աստուածաշունչ և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք, եր. 262, գինը ֆր. 4—50. բ) Գր. Տէր-Պողոսեան—„Նկատողութիւններ Փաւստոսի պատմութեան վերաբերեալ“, եր. 114, գինը ֆր. 1—50 գ) Գր. Սիմոն Վէրէր—„Ուրարտու Սուրբ Գրոց մէջ“, թարգմ. Հ. Բառնարաս Վ. Պիլէդիկեան, եր. 81, գինը 1 ֆր. 9) Խաչատուր քահ. Փանեանց—„Բարեպաշտութիւն“, Թիֆլիս, 1901, եր. 39, գինը 10 կոպ. 10) Ե. Հէրճարտ—„Յուդայի վերջին գիշերը“, թարգմ. Խաչ. քահ. Փանեանցի, Թիֆլիս, 1901, եր. 25, գինը 5 կոպ. 11) „Փաբիոլա“, թարգմ. Խաչ. քահ. Փանեանցի, Թիֆլիս, 1901, եր. 91, գինը 15 կոպէկ. 12) Հենրիէտտա Վիտոֆ—„Մանիկը“, թարգմ. օր. Շ. Ն.—Ն., Թիֆլիս, 1902, եր. 23, գինը 12 կոպ. 13) Ն. Մալխասեան—„Հայ գեղջուկի Նլբոմը“, Բ. մասն, նկարներով. Թիֆլիս, 1901, եր. 37. 14) „Уставъ Кавказскаго Общества Вспомоществованія учащимся студентамъ университетовъ и другихъ высшихъ учебныхъ заведеній“. Թիֆլիս, 1902, եր. 18. 15) Г. П. Степановъ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՅԼԵՐ...

(Գիւղացու ցաւերից)

—

Գիւղացիք աւելի եւս զարմացած, երկրորդ բաժակներն էլ քամեցին ու Սարգիս աղայի առաջնորդութեամբ մտան ներսի փոքրիկ սենեակը։ Դա մի նեղլիկ, քառանկիւնի աղտոտ խուց էր հազար ու մի բանով լցված. մի անկիւնում աթոռ, փայտ, միւսում կիսատ պարկերով ցորեն, գարի, ձու, իւղ պանիր... մի կատարեալ մառան էր։ Պատուհանի առաջ դրած էր կեղտից ու մրից սեւացած մի կոտրած սեղան իր եռոտանի նստարանով, որի վերեւ պատի վրա հոգեւարքի պէս փլփլում էր կոտրած ապակիով հազար մի ոճիրների վկայ մրոտ լապտերը։ Սաղան, հիւրերին տեղ ցոյց տալով, բազմեց սեղանի գլուխը։

—Է՛, տղաք, գիտէք ինչի եմ կանչել...։

—Ձը գիտնալու ինչ կայ, աղա... գիտենք հրմը... դէ ըշտը դունա գիտես մեր հալը..., դեօր (մինչեւ) աչունք մէմ համբերէ, աչենք ծախենք, իլլանքամ էնենք (ճար)..., խեղճացած պիտիկոր պատասխանեցին գիւղացիները։

—Հա՛, հա՛, հա՛..., խռոլոտ, ինքնաբաւական, նպարտ ըրքիջով հռհռաց աղան,—չէ՛, ծօ, չէ... չաշխուն, էտոր համար չեմ կանչել, հրմը «գող, սիրաը գող», դէ, ուր է էդիկայ տաք պիտի հրբլքի, քանի թէզ տաք ձեզի լաւ է, հրմը ես էսօր ուրիշ բանի համար էի կանչել..., վերջին խօսքերի հետ Սարգիս աղի դէմքն էլ, ձայնն էլ փոխվեցին։

Գործնական մարդու լրջութեամբ, դեղնած մատներով հաստ պապիրոսն ոլորելով—շարունակեց.—էս մեր գեղացիք շատ խեղճ են, ախպա՛ր. չատ խեղճ, հէչ իրենց խէրն ու չարը (բարին ու չարը) հասկնալ չեն, իրենց ոտով կերթան կրակը կըյնին...։ Ըսէ ձեր ինչ բանն էր վարժատուն, որ գնացիք քօռքօռնա ձեռք քաշեցիք (ստորագրեցիք), բացիք ձեր պապերը, որ կարդալ չիտէին, չըլլիր թէ չէին ապրի...։ Զիտէք որ «աշխարքը կարթցողէն պիտի վար անցնի»... Դիան, դիան, հեռուն չերթանք, վարժապետում ունինք, գեղը պաթրմիշ էրաւ (աւերեց)։ Պաս չը կայ, ժամ չը կայ, պատարագ չը կայ..., անտէր զալամն (գրիչը) արուն թաթխել առել ընկել է հալը օլանին էրթին... հա՛, մալի ցաւ կայ գեղը, չեղէն դուս միք ելլէ, ցաւը տարածվի կը, մէմա աչեցիր դժոխքի սալդրտի պէս թափին կը դօխտուր, ֆելչեր, մալ չեն թողնել գեղը ջարդեն կը, մեղայ Աստու, մեղայ, Աստու բիլա հակառակ է։ Հա՛, գլաւան, սուդիան կաշառք կերան, բախի (օղի) խմեցին, ծօ, հրաը չօռ ուտեն կաշառք՝ որ չուտեն, ախր գործ պիտի եօլա էրթա...։ Հա՛, զենգինին (հարուստները) վախշառու են, փարի չահ կանեն, էնքան էրին, որ հիմի մէկըմ խեղճի կապէկ տվող չիլլի...։ Դէ հրամմէ, չանորդի, վարժապետ ես ինչ դարազադա ես, դու տուր, աչենք ղոլայ է (հեշտ է) փարա տալը...։ Ծօ, ինի չիշան բեր մէմ ես մնայ...։ Հա՛, հիմիա եսսիմ, ընկել է փարա կը ժողվէ, թէ գեօրա (իբրեւ թէ) անտէր, եթում (որբ) տղաք կան, էնոնց պիտի ղրկէ...։ Է՛, ուր կաւտրցնես (հաւատացնես) ծօ, ես ա խօ գեղացի չեմ, որ խելքս տոպրակը (պարկը) դնես, իրեն փորն է անօթցել մահանա (պատճառը) եթումներն է էրել ու փարա թոփ կենէ...։ Թէ ղորթ է հոս քիչ աղքատ կայ, թող էնոնց տա՛, դիան, դիան մէկը դուք, չատ ունեւորըմ էք, օգնող է թող ձեզի օգնէ...։ Է՛, դուք ինչ է էք խաբար, ադ կարթցողնուն ես տակն ու վրան գիտեմ...։

Ծառան բերեց արաղի չիշը։

—Սաղ ըլլիք, տղա՛ք, Աստուած կենա (էլի) գուռ-դըրկցի միջէն զնդինն անպակաս էնէ, որ խեղճին աղքտին ա ցաւն հոգան... ադ ասնօթի ղներն ինչ են. լաւ մարդ որ ըլլին սարխանի պէս գեղերն ինչ կը պտրտեն, թող ըշտը կարթցող են քաղաք էրթան...։ Նեղը կը ցնիք իմ քովս եկէք, ջանքս սաղ ըլլի... հրմը (բայց) դուքա պատիւ գիտցէք, մեծի խօսք ճանչեցէք...։

—Ամէն, աղա, ամէն... կամաց կրկնում էին գլուխները կախ գիւղացիք։

—Է՛, գիտէք, տղա՛ք, ինչի եմ կանչել... միմի բաժակ էլ հիւրերին հրամցնելուց յետոյ, ձայնն աւելի ցածրացնելով խորհրդաւոր կերպով շարունակեց Սարգիս աղան,—հիմի էդ վարժապետին վրա քննութիւն կայ, ինձի ա կանչել էին, թէ գեօրա (իբրեւ) ես ա հետը փարա եմ թոփ էրել (հաւաքել)... Է՛, դուք ըսէք հիմի, ինձի էդման բան ուրիշ կուգայ (ադ կը գայ)... հէչ տեսնի, իմացել էք։ Ես ա գնացի «չիտակը» ըսի, թէ ղոր թէ (ուղիղ է) մեր գեղը այդ բանին համար փարա թոփ էրին, ես ա տուի, հրմը թոփ էնողը (հաւաքողը) մեննակ վարժապետն էր։ Զեղի ա վկայ ցոյց տուի... հիմի դուք գիտէք, տեսնիմ ձեղի...

—Աչքերուս վրայ, աղա՛, հրմը...

—Ի՞նչ հրմը...

—Ախր ինչրդ (ինչպէս) հոգեստանս սեւենք, վարժապետը մարդը մեննակ չէր ախր, ամենակալն (երէցփոխ) ու իւզբաշին ա հետն էին, համտա (համ էլ) խեղճ, անտէր մնացած եթումնուն համար է կրսէին...

—Ծօ՛, հերիք խելքերէդ դուս զրցիք (խօսիք)... ի՞նչ եթում, ինչ բան... ամենակալ, իւզբաշի ինչէ էին խաբար... ինձնէն չատ խօ չէք հասկընա, բիրադի ադ չան որդուն ձեռքն էր... ես ձեղի ինչ որ կըսեմ դուք ան էրէք, ձեր ինչ բանն է... Կանչեն կը սրա ըսէք՝ ղորթ է, մենք ա տուինք, Հայաստանի համար էր, հրմը չիտենք ղրկից, ինչ էրաւ, խաբար չենք... Ձեզի կաւ չի բաւականանայ Ս. Հայկունու ցուցմունքներով, որոնք շատ անգամ թերի են ու սխալ։ Վերջապէս «օտարազգի բառ» հասկացողութիւնը շատ առաձգական է, ուստի եւ զգուշալի է այս-ինչ բառը վճռաբար օտարազգի հրատարակել, իսկ մի ուրիշ բառ, որ նոյնպէս օտարազգի է՝ մկրտել իբրեւ հայերէն բառ։ Մի ցանկութիւն էլ որ վերաբերում է մեր հրատարակութիւններից շատ շատերին.—մեծ բարիք կը լինէր ընթերցողների համար՝ եթէ գրքի թերթերը կարած լինէին։ Թէկուզ սրա համար գրքի գինը փոքր ինչ էլ թանգանար։

Ստ. Մ.

—

Նոր ստացված գրքեր. 1) Հ. Ս. Էփրիկեան—„Ինաշխարհիկ Բառարան“, պրակ չորրորդ, պատկերազարդ, Վենետիկ, եր. 481—640. 2) Franz Nikolaus Fink—„Zeitschrift für armenische Philologie“, Մարբուրգ, 1902. 3) Բժ. Ա. Բուդուղեան—„Վիրաբուժական հիանդութիւն և Օպերացիա“, Պետերբուրգ, 1902, 29 եր. գինը 5 կոպ. 4) „Հաշիւ Բարեգործական Ընկերութեան հայոց Նոր-Նախիջեւանի վասն 1901 ամի“, Նախիջեւան, 1902 եր. 44. 5) Ե. Թ.—„Սահակ Պարթև“, Պետերբուրգ, 1902, եր. 25, գինը 5 կոպէկ. 6) Ա. Շահ-Մուրադեանց—„Ինչ է կանանց նպատակը“, հատոր առաջին, Բագու, 1902, 108 եր., գինը 30 կոպէկ. 7) Խորէն եպիսկոպոս Ստեփանէ—„Երկու եպիսկոպոս, երկու վարդապետ և երկու քահանայ“. Բագու, 1900, եր. 92, գինը 30 կոպէկ. 8) „Ազգային Մատենադարան“, Վիեննա, 1901. ա) Յովսէփ վարդապետ Ամատունեան—„Աստուածաշունչ և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք, եր. 262, գինը ֆր. 4—50. բ) Գր. Տէր-Պողոսեան—„Նկատողութիւններ Փաւստոսի պատմութեան վերաբերեալ“, եր. 114, գինը ֆր. 1—50 գ) Գր. Սիմոն Վէրէր—„Ուրարտու Սուրբ Գրոց մէջ“, թարգմ. Հ. Բառնարաս Վ. Պիլէդիկեան, եր. 81, գինը 1 ֆր. 9) Խաչատուր քահ. Փանեանց—„Բարեպաշտութիւն“, Թիֆլիս, 1901, եր. 39, գինը 10 կոպ. 10) Ե. Հէրճարտ—„Յուդայի վերջին գիշերը“, թարգմ. Խաչ. քահ. Փանեանցի, Թիֆլիս, 1901, եր. 25, գինը 5 կոպ. 11) „Փաբիոլա“, թարգմ. Խաչ. քահ. Փանեանցի, Թիֆլիս, 1901, եր. 91, գինը 15 կոպէկ. 12) Հենրիէտտա Վիտոֆ—„Մանիկը“, թարգմ. օր. Շ. Ն.—Ն., Թիֆլիս, 1902, եր. 23, գինը 12 կոպ. 13) Ն. Մալխասեան—„Հայ գեղջուկի Նլբոմը“, Բ. մասն, նկարներով. Թիֆլիս, 1901, եր. 37. 14) „Уставъ Кавказскаго Общества Вспомоществованія учащимся студентамъ университетовъ и другихъ высшихъ учебныхъ заведеній“. Թիֆլիս, 1902, եր. 18. 15) Г. П. Степановъ

ա ինչ լաւութեն կէնիմ էտեւ (յետոյ) կիմանաք... իմ ձեռքս չէ փառք Աստու, թող գործը ըսածիս պէս ըլլի, ադ չանորդին աչիչս առջվէն կորի, ձեր բարեթները չը պատռողին ծնողը... հասկըցա՛ք...

—Հասկըցանք, աղա՛...

—Դէ՛, առէք աչեմ, առէք, մէկ-մէկ հատ ա խմենք, լաւ ճանչեցէք ինձի, հասկցիք, որ ես ձեր բարեկամն եմ...

Կէս գիշեր անց էր, երբ Սարգիս աղայի հիւրերը գլուխները տաք, հազար ու մի փոխադարձ խոստումներով ու յոյսերով ցրվեցին։ Զիւնը կըտրել էր։ Լրման մօտ բոլորակ լուսինն էլ աչքերը չռած դիտում էր երկրի սպիտակ սաւանի վրա սողացող, գալարվող սեւ մարդուկներին, օձ սրտերին...

—

Առաւօտ էր, մայիսվայ գեղածիծաղ առաւօտներից մինը։ Սար ու ձոր պճնվել, զարդարվել, տօնական զգեստ էին հագել։ Գառ ու ուլ, հաւք ու ճիւ, հորթ ու հոտաղ, գետ ու առու ձէն ձէնի տուած չարաճճի մանկական մի խեղճ համերգ էին կազմել ու գովում, գովաբանում էին սիրուն գարունը։ Ծ. գիւղն ամայացել էր, բոլորը լցվել էին դաշտը։ Դպրոցն էլ կիսով չափ դատարկվել էր։ Ցանց էր, մեծ աշակերտները գնացել էին հոտոտութեան, մնացել էին փոքրերն ու աղջիկները։

Հայոց լեզուի դաս էր։

«Ուր ես առաջ գնում, խեղճ ոտիկ վարդին,
Տես, չը ձգեն քեզ ալիք անդունդը ծովին...»

Գարնան կրակով լցված կարդում էր ուսուցիչն ու բացատրում երրորդ բաժանմունքի աղջիկներին։ Ցանկարծ դպրոցի դուռը բացվեց ու տեղական տանուտէրը ներս մտաւ։

Ուսուցիչը արձակված էր պաշտօնից։

Սարգիս աղայի համար տօն էր։ Գիւղի գայլը յաղթեց։

Զաւախեցի

—„Краткій Историческій Очеркъ возникновенія и развитія санитарнаго дѣла и врачебныхъ учрежленій въ г. Тифлисѣ“, Թիֆլիս, 1901, եր. 65. 16) „Труды перваго съѣзда дѣятелей по кустарной промышленности Кавказа“, Թիֆլիս, 1902, եր. 66։ ԳԷՕԹԷ—„Ֆաուստ“, թարգման. գերմաներէնից Գէորգ Բարխուդարեան. Թիֆլիս, 1902, 225 եր., գինը 2 ռուբլի։

ԹԻՖԼԻՍԻ ՕՊԵՐԱՑՈՒՄ

—

Թիֆլիսում վերջացան օպերային ներկայացումները։ Այս սեզոնի երկու գրաւիչ ոյժերը՝ երգիչ Ֆիգնէր եւ երգչուհի Տետրացինի հանդէս եկան վերջին անգամ ուրբաթ երեկոյ, ապրիլի 5-ին։ Այդ օրվայ ներկայացումը կրում էր տօնական բնաւորութիւն։ Հասարակութիւնը յայտնեց իր յարգանքը բուռն ծափահարութիւններով, փնջերով եւ ընծաներով։

Մենք առիթ ունեցանք երգիչ Ֆիգնէրին տեսնել 8 օպերաների մէջ, այն է «Ռօմէօ եւ Ջուլիետա», «Դուբրովսկիյ», «Հուգենոտներ», «Ֆրադիավոլո», «Пиковая дама», «Կարմեն», «Եւգենից Օնեգին» եւ «Պայեացներ»։ Այդ օպերաները բազմատեսակ նիւթ էին տալիս որոշելու Ֆիգնէրի տաղանդը եւ երգելու բնաւորութիւնը։

Ֆիգնէրը թողեց գեղեցիկ տպաւորութիւն։ Իբրեւ արտիստ նա արժանի է առանձին ուշադրութեան։ Նրա ձայնը այն մետալական, զիլ, բարձահնչիւն ձայներից չէ, որոնք կազմում են տենօրների գրաւչութիւնը եւ որոնք անդադար հնչում են մարդու ականջին, երբ մարդ այլ եւս թատրոնական դահլիճում չէ։ Ոչ։ Այդ ձայնը բուն է իր վերին աստիճաններում։ Բայց դրա փոխարէն նա շատ գրաւիչ եւ փայփայող է ներքին աստիճաններում։ Այնտեղ, ուր պէտք է արտայայտել քնքշութիւն, գգուանք եւ հոգեկան նուրբ ելեւէջներ, այնտեղ այդ ձայնը հանդէս է գալիս իր բոլոր հրապոյրներով։ Հրաշալի պիանիսիմոն եւ մաքուր հնչիւնները թովիչ ներգործութիւն են անում։ Ֆիգնէրի երգեցողութեան մի մեծ արժանաւորութիւնն էլ այն է, որ շատ պարզ եւ որոշ արտասանում է բառերը, այնպէս որ նրա երգի ոչ մի խօսքը չէ կորչում հանդիսականի համար եւ իւրաքանչիւր բառ խելացի կերպով երգվում է ու արտասանվում։ Ֆիգնէրի երրորդ շատ խոշոր արժանաւորութիւն է—նրա աննման խաղը, որ յաճախ գերակշռող է հանդիսանում, քան երգը։ Հարուստ եւ բազմատեսակ շարժումներ, դրամատիական մեծ ըմբռնողութիւն, բնական եւ զգացված ու մտածված խաղ—այդ բոլորը միասին դարձնում են նրան մի հետաքրքրական դերասան։

Ֆիգնէրը ուսանելի արտիստ է։ Ուսանելի է նրանով, որ նրա թէ երգը եւ թէ խաղը ցոյց են տալիս խելացի եւ մեծ աշխատանքի արդիւնք, խորին ուսումնասիրութեան արգասիք։ Ֆիգնէրը կարող է օրինակ ծառայել արտիստների համար, որոնցից շատերը անուշադիր են մնում դէպի կատարելագործութիւնները եւ մի որոշ բաւարար աստիճանից այլ եւս չեն աշխատում դէնը անցնել։

Երգչուհի Տետրացինին մենք տեսանք տասն օպերաներում, որոնցից ընտրոյները նրա համար էին «Լուչիա», «Դինորա», «Տրավիատա», «Ռուրիտաններ», «Սեվիլիայի Սափրիչ», «Ռիգոլետտո» եւ ուրիշները։ Տետրացինին նախ եւ առաջ հրաշալի մի ձայնի տէր է, որ հազուագիւտներիցը կարող է համարվել։ Մաքուր, ախորժելի, արծաթահնչիւն այդ ձայնը մշակված է ամենակատարեալ կերպով եւ ընդունակ է դարձել արտայայտելու հոգեկան նուրբ եւ քնքոյշ զգացմունքներ սրտառուչ կերպով։ Բազմաթոիթիռ գեղգեղանքները եւ դայլայլիկները, զեղուն օրօրները, զգացված հեծկլտանքները, թափ-թափ հնչիւնները հիացնում են լսողին իրանց կատարելութեամբ եւ նրբութեամբ։

Սիրող

ՏՆԱՑՆԱԳՈՐԾԱԿԱՆ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

(Նամակ Պետերբուրգից)

III

Հրատարակված կանոնադրութեան համաձայն, ցուցահանդէսին մասնակցելու իրաւունք է տրված գիւղացի տնայնագործներին, զէմստվոներին, տնայնագործական կոմիտէներին, մասնագիտական դպրոցներին։ Միայն Անդրկովկասի եւ Թուրքեստանի համար բացառութիւն է կազմված եւ թոյլ է տուած, որ այդ երկիրներից մասնակցեն քաղաքային տնայնագործ-արհեստաւորները, ի նկատի ունենալով, որ այդտեղ չը կան գիւղական-տնայնագործական արհեստներ։

Բոլոր էկսպոնէնտների թիւը 3405 է, որոնցից հիւսիսային Կովկասինը եւ Անդրկովկասինը—335։ Մնացածները հետեւեալ կերպով են բաժանվում. մասնակցում են էկսպոնէնտներ՝ Վլադիմիրի նահանգից—283, Մոսկվայի նահանգից—353, Պէրմի նահանգից—193, Նիժեգորոդեան նահանգից—327, Տուլայի նահանգից—155, Կալուգայի նահանգից—197, Տամբովի նահանգից 185, Պէնզայի նահանգից—28, Կուրսկի նահանգից—45, Ռէազանի նահանգից—13, Պոլտավեան նահանգից—72, Զէրնիգովի նահանգից—15, Կիեւի նահանգից—2, Խարկովի նահանգից—8, Վորոնէժից—10, Վոլոգդից—22, Սիմբիրսկից - 59, Տվերից—19, Օրլովից—6, Սմոլենսկից—17, Պսկովից—17, Նովգորոդից—14, Սամարայից—3, Ուֆիմից—20, Սարատովից—151, Կազանից—117, Վեատկայից—180, Արխանգելսկից—15, Տոբոլսկից—12, Տոմսկից—1, Եակուտսկից—2, Պոդոլսկից—7, Բեսսարաբիայից—32, Լեհաստանից—5, Տաւրիկեան նահանգներից—11, Անդրկասպեան շրջանից—9, Սամարկանդի շրջանից—25, Ֆերգանեան շրջանից—2, Սիր-Դարեան շրջանից—1, Բուխարայից (էմիրը)—1, Դոնի շրջանից—3, Ստավրոպոլի նահանգից—1, Ֆինլանդիայից—24, Օստզէյի նահանգներից—33, Վիտէբի նահանգից—2, Գրոդնոի նահանգից—1, Մինսկից—1, Վոլինսկից—13, Կովնոի նահանգից—2, Խերսոնի նահանգից—4, Պետերբուրգի նահանգից—104, Օլենեցկի նահանգից—6, Կոստրոմսկից—81, Եկատերինոսլավի նահանգից—162։ Ընդամենը 3405 էկսպոնենտներ եւ որովհետեւ իւրաքանչիւր էկսպոնենտ ի ցոյց է դրել իր տնայնագործութեան արդիւնքը, ուստի եւ պէտք է ընդունել, որ 3405 տնայնագործական արդիւնքների կամ արտադրութիւնների տեսակներ ի ցոյց են դրված։

Բոլոր այդ էկսպոնատները զետեղված են 18 դահլիճների մէջ։ Առաջին դահլիճում զետեղված են Մոսկվայի եւ Վլադիմիրի նահանգների արդիւնքները, որոնք թէ որակութեան եւ թէ քանակութեան կողմից ամենանշանաւոր տեղ են բռնում։ Երրորդ սրահում զետեղված են Լեհաստանի, Ֆինլանդիայի եւ Կովկասի արդիւնքները, որոնք նոյնպէս նշանաւոր են որակութեան եւ գեղարուեստական ճաշակի կողմից, այնպէս որ ընդհանուր կարծիք է, թէ ցուցահանդէսի ամենաաջողված բաժիններն են Մոսկվա—Վլադիմիրեան, ֆինլանդական եւ կովկասեան բաժինները։

Մեր առաջ բերած թուանշանները կարող են նոյնպէս մի որոշ գաղափար տալ, թէ մինչեւ ո՞ր աստիճան զարգացած են տնայնագործական արհեստները ամեն մի նահանգում։ Այդ թուի մէջ չեն մտնում «աշխատաւոր օգնութեան» (трудовая помощь) բաժնին վերաբերեալ էկսպոնատները, որոնք առանձին են զետեղված, ինչպէս եւ գիւղատնտեսական գործիքների եւ մեքենաների պավիլիոնը, որ առանձին է, պալատից դուրս։

Անդրկովկասից մասնակցում են, սակայն, ոչ միայն քաղաքները, այլ եւ գիւղացիներ եւ գիւղական հասարակութիւններ, նոյն իսկ զանազան խուլ անկիւններից. այսպէս, օրինակ, Երեւանի նահանգի Փարակա գիւղից մասնակցում է Աղամալ Մէլիք-Աղամալեան (մետաքսեայ ջէջիմներ), Գանձակի նահանգի Հինդ-արի գիւղից մասնակցում է Հաջի-բէկ Հաջիեվ (նոյնպէս մետաքսեայ ջէջիմներ), Նուխու գաւառի Դաշբոլաղ գիւղից՝ Յովհաննէս Սրամեանց (խուրջին, կապերտ), Զիբրայիլի գաւառի Հաղրութ գիւղից՝ Խաչիկեան (գորգեր)։ Անդրկովկասի արտադրութիւնների մէջ գլխաւոր տեղը բռնում են գորգեր, մետաքսեայ ձեռագործներ, արծաթեայ բանուածքներ. վերջին բաժնի մէջ աչքի են ընկնում Դաղստանի առարկաները եւ Թիֆլիսցի Կարապետ Սերովբեանցի արծաթեայ իրերը։

Կովկասեան տնայնագործական բաժնի կարգադրիչը եւ կառավարիչը պ. Յ. Փիրալեանն է, իսկ նրա օգնականը՝ օրիորդ Ե. Լօրիս-Մէլիքեան։

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Ապրիլի 2-ին

Սրանից մօտ 16 տարի առաջ, գաւառս Տատէշ գիւղի մի ընտանիքից երեք հոգի, մարդասպանութեան մէջ յանցաւոր ճանաչվելով դատապարտվեցին տաժանակիր աշխատանքների եւ աքսորի։

Օրերումս նրանցից երկուսը վերադարձան հայրենիք, որը եւ մեծ զարմանք պատճառեց տեղացիներիս։

Որպէս լսում ենք, նրանք վերադարձել են վեցամսեայ անցագրով եւ աշխատում են հասարակութիւնից համախօսական ձեռք բերել ընդ միշտ բնակութիւն հաստատելու իրանց նախկին բնակավայրում։

Այս վերադարձողների կանայքը, սպասելով երկար տարիներ իրանց ամուսինների դարձին, ապա իրանց ցանկութեամբ եւ հոգեւոր իշխանութեան թոյլտուութեամբ՝ մտնում են նոր ամուսնութեան մէջ այլ մարդկանց հետ։

Նորեկները վերադարձած օրից զանազան սուտ եւ անպատւաբեր լուրեր են տարածում ժողովրդի մէջ իրանց մեղադրողների վերաբերութեամբ, բայց մանաւանդ իրանց նախկին կանանց եւ կանանց նոր ամուսինների մասին, սպառնում են եւ այդպիսով խանգարում ուրիշների հանգիստը, տեղիք տալով վայր ի վերոյ բամբասանքների։

Դրանցից երրորդը—ամենայանցաւորը, որը դեռ չէ վերադարձել եւ, որպէս լսում ենք, շուտով վերադառնալու է, մեղադրված օրից մինչեւ այժմ չէ դադարում զանազան սպառնական եւ հայհոյական նամակներ ուղարկել դէս ու դէն իրան մեղադրողների հասցէին։ Վերջին ժամանակներս սա, լսելով այդ նորեկների կանանց ամուսնանալը ուրիշների հետ եւ առ ոչինչ համարելով բարձրագոյն հոգեւոր իշխանութեան թոյլտուութիւնը նորեկների կանանց նոր ամուսնութեան վերաբերութեամբ, անպատւաբեր եւ սպառնական նամակներ է ուղարկում նորեկների նախկին կանանց եւ կանանց ծնողներին։

Վ.—Ց. Աղնաուրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ուրբաթ, ապրիլի 5-ին, Թիֆլիսի ռուսադաւանների Ալէքսանդրօ-Նեվսկի մայր-եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ ներքին գործերի հանգուցեալ մինիստր Սիպեագինի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էին Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին, կառավարչապետի օգնական գեներալ Ֆրէզէ եւ տեղական զինուորական ու քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչները։

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք. «Շատերը թիւքահպատակ հայ փախստականներից, որոնք ապրում են Թիֆլիսում եւ չեն կարողացել մինչեւ ապրիլի 2-ը յայտնել իրանց ցանկութիւնը ռուսահպատակութիւն ընդունելու վերաբերմամբ, այժմ դիմում են Թիֆլիսի ոստիկանապետին եւ յայտնում են իրանց համաձայնութիւնը ռուսահպատակ գրվելու՝ խնդրելով մի եւ նոյն ժամանակ երդվեցնել նրանց օրինական կարգով։ Ուշադրութեան առնելով այս հանգամանքը, Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է յայտնել պրիստաւների միջոցով կամաւորապէս ռուսահպատակութիւն ընդունել ցանկացող հայ փախստականներին, որ նրանց ցանկութիւնը կարող է կատարվել այն պայմանով, եթէ նրանք յանձն կառնեն հոգալ իրանց միջոցներից երդման համար կարեւոր ծախքերը»։

—

Ղզլարից մենք ստացանք հետեւեալ հեռագիրը. «Երկու գիշեր միմեանց յաջորդող ցրտերի պատճառով խաղողի վազերը բոլորովին փչացան. քաղաքացիների գրութիւնը անելանելի է։ Աղաբալեան»։

—

Երէկ, ապրիլի 6-ին, նախագահութեամբ երկրագործութեան մինիստրի Կովկասեան լիազօր Մեդվեդեվի՝ տեղի ունեցաւ Կովկասեան պետական կալուածների կառավարիչների համաժողովի վերջին նիստը, որից յետոյ կառավարիչները կը վերադառնան իրանց պաշտօնատեղերը։

—

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ Աստրախան են հասել անգլիական կառավարութեան կողմից գործակալներ, որոնց նպատակն է ձիեր գնել հարաւ-աֆրիկական պատերազմական բեմն ուղարկելու համար։ Գործակալները չափազանց անհանգիստ են եւ երկիւղ են կրում որ եւ է արգելքի հանդիպելուց իրանց մտադրութիւնը իրագործելու մէջ։ Տեղեկութիւններ կան, որ Սարատովում նոյն նպատակով գործում են ուրիշ գործակալներ, որոնք արդէն 5,000 ձիեր են գնել եւ ուղարկել Անգլիա։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ մշակված համալսարանական նոր կանոնադրութիւնը, մայրաքաղաքի լրագիրների առելով, պետական խորհրդի քննութեանը կենթարկվի՝ նրա գարնանային նստաշրջանի ժամանակ։

—

Պաստոր Գիլլօտ մօտ օրերումս կը հրատարակէ այն ընդարձակ նամակի պատճէնը, որ 10,000 ռուսների կողմից ուղարկվում է բօէրական զօրքերի գլխաւոր հրամանատար Լուի Բոտայի ամուսին տիկին Բոտային։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 19-ին լրանում է հռչակաւոր հայ նկարիչ Այվազովսկու մահվան երկամեակը։ Գեղարուեստական Ակադեմիայի մի խումբ ուսանողներ պիտի տօնեն այդ օրը, եւ հոգեհանգիստ պիտի կատարվի. մտադիր են տալ մի երաժշտական գրական առաւօտ, որտեղ կը խօսեն, ի միջի այլոց, Ակադէմիայի պրոֆէսորները»։

—

ՄՈՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Ազգային մեծ բարերար Յովհաննէս Լազարեանցի յիշատակին կառուցվելիք ծխական երկսեռ դպրոցի համար սկսված ստորագրութեան գործը շատ դանդաղ է առաջ գնում. այսպէս, ամբողջ 5 ամսվայ ընթացքում հաւաքած փողի գումարը հազիւ 14,000-ի է հասել, այն ինչ՝ հասարակութիւնը իր վերջին ժողովում որոշեց ընդունել ճարտարապետի երկու մակարդակից այն, որը պիտի արժենայ մօտ 30,000 ռուբլի։ Ստորագրութեան թերթը համարեա ամենքի մօտ եղել է, ուրեմն այդ գումարից աւելին սպասելը—յուսախաբութիւն է... Ի՞նչ անենք. մենք սիրում ենք բերանացի մեծ-մեծ պալատներ կառուցանել, գործի սկզբում հմակրութիւն ցոյց տալ, բայց երբ գործը գալիս է իրականութեան, մենք գրօշներ ենք տալիս... եւ հեռուից դիտելով, թէ ինչ են ստորագրում ուրիշները, յետոյ մենք ենք տալիս մերը եւ ոչ թէ կատարում այն, ինչ թելադրում է մեր բարի կամքը, մեր խիղճը։ Փաստերը արդարացնում են խօսքերս. մենք կարողացանք նկատել, որ երբ մէկը՝ դիցուք Շ-ն, որ կարող էր ստորագրել 3000 ր., բայց ստորագրեց միայն 1,500 ռուբլի, միւս Ն-ը, որ կարող էր նոյնպէս տալ 3000 եւ գուցէ մտադիր էր, բայց որպէս զի Շ-ի սիրտը չը ցաւեցնէ եւ խնամիութիւնը պահպանէ, նա էլ ստորագրեց 1500 ր. պահպանելով հաւասարակշռութեան սկզբունքը, որը ի հարկէ անտեղի էր այստեղ։ Եւ ահա այսպէս հետեւաբար եւ միւս շատերը ստորագրութեան կուրսը իջեցնելով, գործի աջողութիւնը հասցրին այն կէտին, որը կարող եղաւ տալ արդիւնք կիսով չափ, մի բան, որ շատ ցաւալի է»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մարտ ամսվայ գարնանային հիանալի եղանակներին յաջորդեցին կատարեալ ձմեռնային եղանակներ։ Ապրիլի սկզբից անընդհատ անձրեւ է գալիս. երէկ մինչեւ անգամ չրջակայ սարերը ծածկվեցին ձիւնի սպիտակ սաւանով։ Եթէ եղանակները յանկարծ դէպի տաքը չը փոխվեն, մեծ երկիւղ կայ, որ այգիները ու պտղատու ծառերը ցրտահար կը լինեն։ Այգետերերը սեւ սուգի մէջ են. ինչ անեն խեղճերը. ինչ ունեն չունեն մխել են այգու վրա, բոլոր աշխատանքը այգու վրա գրեթէ վերջացել է, յանկարծ նրանց մի քանի ամսվայ չարչարանքը ու տուած փողը մի օրվայ մէջ ոչնչանալու է անժամանակ եկող ձիւն ու ցուրտից»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Անցքպետը նոր քաղաքագլուխ Ն. Ամիրխանեանի եւ օպպոզիցիայի մէջ գնալով մեծանում է։ Ժողովները դառնում են աղմկալի եւ հետաքրքիր։ Մեռած Սղնախում կենդանութիւն է տիրել։ Մարտի 26-ին կայացած դումայի նիստում քաղաքագլուխը առաջարկեց հաստատել կայացած ծախսերը՝ կապալով տալու սպանդանոցը տարեկան 1110 ր.։ Զայնաւոր Վ. Աւագեան առաջարկեց փոխել կապալի պայմանը, որովհետեւ ներկայ պայմանով պահանջվում է 400 ր. կապալառուից գրաւական եւ 400 ր. առաջուց. այս պայմանները նա ծանր էր համարում, որովհետեւ 800 ր. միանուագ կարող են տալ կապիտալիստներ, մինչդեռ պահանջելով գրաւական եւ ամէն ամիս փող՝ այդպիսի հնարաւորութիւն կունենան աճուրդ նակցելու, որով կապալավճարը կը բարձրանար։ Մեծամասնութիւնը որոշեց հաստատել դը, սակայն Վ. Աւագեան պահանջեց քուէարկութիւն։ Քաղաքագլուխը չը վեց, ուստի Վ. Աւագեան եւ Ս. Տերեան վիրաւորված համարելով իրանց՝ հեռացան։ Քաղաքագլուխը նորից դրել էր «ձորի» հարցը։ Նա զեկուցանում էր՝ 6000 ր. փոխառութիւն անել ձորը ամրացնելու համար, ինժէներ Անտոնովի նախագծով։ Զայնաւորներ Գ. Սարգսեան եւ Ս. Աբրահամեան յայտնեցին, որ այդ հարցը վճռվեց նախորդ նիստում եւ աւելորդ է նորից դնել, որի պատճառով հեռացան ժողո-

վից։ Մնացածները, բացի մէկից, ընդունեցին քաղաքագլխի առաջարկութիւնը, քանդելով նախկին որոշումը։ Քիչ յետոյ հեռացաւ եւ մի ուրիշ ձայնաւոր, որի պատճառով ժողովը փակվեց։ Հեռացող ձայնաւորներից քաղաքագլուխը պաշտօնապէս պահանջեց գրաւոր բացատրութիւն։ Նրանցից շատերը իրանց հեռանալու պատճառները բողոքով հաղորդելու են պ. նահանգապետին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նարիման-խան Ենիկոլօփեանը, որը այն հայերի սերունդներից մէկն է, որոնց գերի էր տարել Աղա-Մահմէդ-շահը Թիֆլիսը աւերելու ժամանակ 1797 թուին, արդէն 25 տարի Վիէննայի պաշտօնական դեսպան է։ Վիէննայի մի քանի լրագիրների նրա վրա արած կատաղի յարձակումների առիթով «Revue d'Orient et de Hongrie» հաղորդում է. «Մ'էյիստագում մի քանի պատգամաւորների կողմից արած հարցապնդումներին մինիստր-նախագահ կէրբէր զայրոյթով հերքեց լրագիրների տարածած բամբասանքները Նարիման խանի մասին։ Նա ասեց. «Մահմանագծային մաքսատնային իշխանութիւնների զեկուցումների հիման վրա, պարսից դեսպանը 25 տարվայ ընթացքում երբէք ի չար չէ գործ դրեց նրան չնորհված իրաւունքը՝ անմաքս զորեղեր գնել իր տան պէտքերի համար։ Նա նոյնպէս երբէք չէ ծախել պարսկական եւ աւստրիական չքանչաններ։ Առհասարակ պարսկական ներկայացուցչի ընթացքը ապատ է։ Իր դիպլոմատիական կարիէրի ամբողջ ընթացքում, 25 տարի շարունակ, Վիէննայում Նարիման-խանը վայելել է կայսրի յարգանքը եւ վստահութիւնը եւ Վիէննայի ամբողջ արիստոկրատիայի անկեղծ սէրը»։ Մինիստր-նախագահի խօսքերը ընդունվեցին բուռն ծափահարութիւններով։ «Revue d'Orient de Hongrie» նկատում է. «Թէպէտ եւ պարսկական դեսպանները եւ ընդհանուր հիւպատոսները ոռճիկ չեն ստանում իրանց կառավարութիւնից եւ հարկադրված են հարստահարել իրանց իրաւասութեան տակ գտնվող պարսկահպատակներին, որով երբեմն ահագին հարստութիւններ են դիզում եւ ապրում են ճոխութեան մէջ, բայց Նարիման-խանը, որ պսակված է հարուստ հայ իշխանուհի Դաղեանի հետ, հէնց նրանով է Վիէննայի պալատի եւ արիստոկրատիայի յարգանքը գրաւել, որ չէ արատաւորել իրան երբէք որ եւ է կաշառակերութեամբ, այլ միշտ եղել է եւ է իսկական մի ջենտլմէն»։

—Համարեա բոլոր անգլիական լրագիրները հաւատացած են, որ խաղաղութիւնը հարաւային Աֆրիկայում վերջապէս կը կապվի։ «Central News» հեռագրով տեղեկութիւն ստացաւ, որ գեներալ Լուի Բոթա արտակարգ գնացքով ուղեւորվեց Վրիդէյտից Կլէրկսդորպ՝ բօէրական պատգամաւորների խորհրդակցութեանը մասնակցելու համար։ «Հավասի գործակալութեանը» նոյն հարցի առիթով հեռագրում են Ամստերդամից, որ այդ քաղաքի խոշոր առեւտրականները եւ բանկիրները տեղեկութիւն ստացան Լոնդոնից, թէ այժմ տեղի են ունենում շատ լուրջ բանակցութիւններ խաղաղութեան մասին եւ թէ այս անգամ նրանք անշուշտ աջողութեամբ կը վերջանան։

—«Temps» լրագիրը հաղորդում է, թէ ֆրանսիական զինուորական նաւատորի այն դիվիզիան, որ նախագահ Լուբէին պէտք է հասցնէ Պետերբուրգ, արդէն կազմակերպված է։ Նախագահը մտադիր է բերել իր հետ Ռուսաստան շատ թանգագին եւ գեղարուեստական յարգ արժէք ունեցող ընծաներ։ Պ. Կոմբարիէ, նախագահի քաղաքացիական գլխաւոր քարտուղարը, դիմել է արդէն ֆրանսիական պետական յաղճապակեայ գործարաններին, ինչպէս նաեւ ոսկեայ եւ արամանդեայ զարդերի ամենայնի վարպետներին՝ առաջարկելով նրանց Էլիսեան պալատն ուղարկել իրանց աշխատանքների ամենահազուագիւտ նմուշները, որոնք անպայման գեղարուեստական նշանակութիւն ունեն։ Էլիսեան պալատում պատրաստված է առանձին դահլիճ նախագահական ընծաների համար, որոնց ընտրութիւնը նախագահը կանէ անձամբ։

—Անգլիական ազատամիտ կուսակցութեան կողմից, Լոնդոնի լրագիրների ասելով, կառաջարկվի լորդ Բոզբերիին, մօտ օրերումս վախճանված լորդ Կիմբերլէի փոխարէն, յանձն առնել ազատամիտների ներկայացուցչի պաշտօնը լորդերի ժողովում։ Շատ հաւանական է, որ լորդ Բոզբերիի կընդունէ այս առաջարկութիւնը եւ ապագայում նորից կը մտնի քաղաքական գործունէութեան ասպարէզը, որից հեռացած է վերջին տարիների ընթացքում։

ԻԱՒՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—Թատրոն թատրոնի մէջ։

Այդպէս բացականչեց իմ ծանօթ նկարիչը, որի հետ միասին նստած էինք Արտիստական ընկերութեան թատրոնական դահլիճում։ Տալիս էին թուրքերէն ներկայացում։

Բնորոշ էր այդ ներկայացումը։

Մենք հետաքրքրված էինք թէ թատրոնական բեմով, թէ հանդիսականներով եւ թէ ամբողջ ներկայացման կազմակերպութեամբ։

Նկարիչը հրաւիրում էր իմ ուշադրութիւնը ամեն մի փոքր եւ մասնաւոր գծի վրա, որ նա նկատում էր թատրոնական դահլիճի մէջ։

—Դուք առանձին ուշադրութիւն դարձրէք օթեակների վրա, ասաց նա՝ ուժգին ինձ հրելով։

—Դարձրել եմ, վրա բերեցի ես։

—Տեսնում էք այս վարագոյրները, հարցրեց նա՝ իմ ուսը թօթվելով։

Ինչպէս չէ. մինթէ կարելի էր չը նկատել։ Անքան օտարոտի է եւ անսովոր։

Օթեակների մի մասի համար չինվել էին յատուկ այդ ներկայացման առիթով վարագոյրներ։

Ինչու համար, կը հարցնէք դուք։

Որպէս զի օթեակներում գտնվող թուրք ընտանիքը կարողանար իրան ծածկած պահել հասարակութեան հայեացքներից։ Թրքուհին չը պէտք է երեսաց դուրս գար ուրիշների առաջ։

Եւ սակայն՝

Սակայն ոչ ոք թրքուհիներից չէր իջեցնում վարագոյրը, չէր ծածկում իր դէմքը։

—Ես երբէք չեմ կարծել՝ թէ այսքան թրքուհիներ կան Թիֆլիսում եւրոպական հագուստով, բացականչեց նկարիչը։

Թրքուհիները եւրոպական եւ վրացական հագուստով էին, իսկ մի քանիսը բուն թուրքական։

—Տեսէք, շարունակեց նկարիչը, նրանք արդէն բաւական ազատ են պահում իրանց։

—Ժամանակի յայտնութիւններից մէկն է դա, պատասխանեցի ես։ Մի քանի տասնեակ տարի սրանից առաջ մեր երկրի թուրքը նոյն իսկ լսել չէր ուզում կնոջ եւրոպական կրթութեան եւ նիստ ու կացի մասին։ Առաջին թուրք կրթված երիտասարդները, որոնք պսակվեցին կրթված մահմեդականուհիների հետ, ստիպված էին փակել իրանց կանանցը։ Հասարակական կարծիքը թուրքերի մէջ թոյլ չէր տալիս կնոջը երեսաց լինել։

Մեզ մօտեցաւ մի կրթված թուրք եւ խառնվեց մեր խօսակցութեան։

—Այժմ էլ, նկատեց նա, նախկին հասարակական կարծիքը չատ ուժեղ է եւ այսօրվայ ձեր տեսածը մի անսպասելի նորութիւն է։ Մենք՝ կրթվածներս՝ խօսեցինք, յորդորեցինք, կշտամբեցինք, համոզեցինք։ Հազիւ հազ գլուխ եկաւ գործը։ Արդիւնքը արդարեւ անսպասելի աջող դուրս եկաւ։

Թուրքը պատմեց մեզ ներկայացման մասնակցողների մասին։

—Կանանց դերերի համար անկարելի էր յոյս կապել թրքուհիների վրա։

Դա չափազանց յանդուգն քայլ կը լինէր նրանց կողմից։

—Այդ էլ ժամանակով, ասաց նա։ Արդէն այն հանգամանքը, որ մեր թուրքերը եւ թրքուհիները տեսնում են բեմի վրա դերասանուհիներ, կին խաղացողների, դա մի նորութիւն է, որ խօսակցութեան առիթ է դարձել։ Բոլորը հետաքրքրվում են, թէ ովքեր են մասնակցողները։

Եւ նա պատմեց շատ ընորոշ խօսակցութիւնների եւ լսած կարծիքների մասին։

—Մեզ օգնեցին ռուսները եւ հայերը իրանց մասնակցութեամբ, աւելացրեց նա։ Դուք մեզանից աւելի առաջ էք գնացել, օգնեցէք մեզ մինչեւ որ մենք էլ կարող կը լինենք սեփական ոյժերով առաջ գնալ։

Մենք բաժանվեցինք թուրքից եւ շարունակեցինք մեր խօսակցութիւնը։

Փափաքաւոր եւ զանազան տարազով թուրքեր բազմել էին օթեակներում եւ աթոռների վրա եւ հետաքրքրութեամբ նայում էին բեմին եւ միմեանց վրա։

Դէմքերի վրա դրոշմված էին զարմանքի, վարանման, ինքնագոհութեան նշաններ։ Շատերը հաշիւ չէին տալիս իրանց եւ դեռ որոճում էին իրանց տպաւորութիւնները։ Նրանց դէմքերը կարծես ասում էին ներկայ եղած օտարներին, թէ «մենք էլ յետ չենք մնում, մենք էլ կարող եղանք ձեզ նմանվել, երկրաչարժից վնասված չամախեցիների համար ներկայացում տալ մեր լեզուով եւ մեր ներկայութեամբ»։

Թատրոնական դահլիճում ժողովված էին մահմեդականների զանազան խաւերը։ Այդտեղ կային պարսից եւ թիւրքաց հիւպատոսարանների պաշտօնեաները, բէգեր, թաղիրներ, աղաներ, թուրք գինուորականներ, աստիճանաւորներ, ուսանողներ։

—Մի՞թէ ճիշդ չասացի, հարցրեց ինձ վերջում նկարիչը, որ սա մի թատրոն է թատրոնի մէջ, մի բեմ է բեմի վրա։

—Եթէ սա թատրոն է թատրոնի մէջ եւ բեմ է բեմի վրա, առարկեցի ես, իսկ ով է հանդիսականը։

—Հանդիսականը, հանդիսականը, մրմնջաց նկարիչը եւ կանգ առաւ։

—Այո, հանդիսականը։

—Մեզնից իւրաքանչիւրը, վրա բերեց նա, ով նայում է դիտողի եւ հանդիսականի աչքով։

—

Ներկայացումը վերջացաւ։

Դուրս եկանք թատրոնից եւ զրօսնեցինք։

—Անկասկած, մենք աւելի առաջադէմ ենք, քան թուրքերը, ասացի ես նկարչին, բայց մենք մեր թատրոնական գործին մինչեւ այժմ չենք կարողացել տալ մի հաստատ կազմակերպութիւն եւ նա դեռ սիրողների ներկայացումների ընաւորութիւն է կրում։

—Ահա կազմվում է հայոց դրամատիական ընկերութիւն, նկատեց նկարիչը։

—Այո, կազմվում է, ասացի ես, շատ ուրախալի է եւ մենք բոլորս ողջունեցինք նրան։

—Երեւի շուտով կը սկսէ իր գործունէութիւնը։

—Պէտք է ենթադրել, յայտնեցի ես։ Սակայն կը գտնվեն արդեօք եռանդոտ, ուժեղ, անձնուէր գործողներ, որոնք գործի վրա նայէին գործի տեսակէտից, որոնք հասարակական բնաւորութիւն տային իրանց գործառնութիւններին եւ չը գրաւվէին մասնաւոր նկատումներով։ Մեր իրականութեան փաստերը թելադրում են, որ նոր ընկերութեան գործողները զգան սկսվող գործի լրջութիւնը եւ համապատասխան աշխատեն։

—Ուրիշ կերպ չէ էլ կարելի, նկատեց նկարիչը։

—

Այժմ անցնեմ մի բոլորովին ուրիշ առարկայի։

Քիչ մնաց, որ մի խոշոր սխալի մէջ ընկնեմ։

Մի քանի օր սրանից առաջ ես ստացայ Երեւանից մի հեռագիր, որի մէջ ասված էր հետեւեալը՝

«Կայացաւ ընտրողական ժողով եւ հոգաբարձուներ ընտրվեցին ժողովրդի ցանկացած անձինք։ Ժողովում տիրում էր օրինակելի կարգապահութիւն։ Նախագահը ոչ մի ճնշում գործ չը դրեց»։

Ստորագրութիւն։

Հեռագիրը շատ մխիթարական էր։

Ուրեմն թիւրիմացութիւնները վերջացան, անտեղի ապառնալիքները՝ նշանակվի հոգաբարձութիւն կազմելու մասին, վերացան։

Բայց ինչպէս տեղի ունեցաւ այդպիսի յանկարծակի փոփոխութիւն։ Արդեօք Սուքիասը փոխվեց, թէ նրա հաշիւները փոխվեցին, թէ վերջապէս ժողովրդի արդար ձայնը լսելի դարձաւ։

Ինչ եւ իցէ՝ հեռագիրը լաւ հեռագիր էր եւ ես ուրախացայ, որ արդար գործը վերջի վերջոյ տարաւ իր յաղթանակը։

Այդպէս էլ պէտք է լինէր։

Ես նորից կարդացի հեռագիրը եւ իմ մտքում չնորհաւորեցի Երեւանի պատգամաւորներին։

Մինչ ես զբաղված էի հեռագրով՝ իմ սենեակի դուռը բացվել էր եւ իմ բարեկամ Սարեկեանը դռնամէջ կանգնած ինձ դիտում էր։

—Այդ ինչ հեռագիր է, որ այդքան քեզ զբաղեցրել է, հարցրեց նա։

Ես սթափվեցի։

—Այդ դու՞ ես, վրա բերեցի ես։ Մի լաւ հեռագիր եմ ստացել Երեւանից։

Կարդացի հեռագիրը։

—Ես եկել էի, յայտնեց նա, նոյն տեսակ մի լուր տալու քեզ։

—Ի՞նչ լուր, հետաքրքրվեցի ես։

Սարեկեանը ժպտաց եւ լռեց։

—Չը գիտեմ, կը հաւատաս արդեօք ասելիքներիս, ասաց նա խորամանկ հայեացքով։

—Ասա, տեսնենք։

—Դու գիտես, սկսեց նա, որ մեր Ներսիսեան դպրոցը վերջին եօթ ութ տարին կանոնաւոր կերպով առաջ է տանում իր գործերը— եւ ստացել է փոքր ի չատէ նախանձելի վիճակ։

—Առանց առաջաբանների, կտրեցի ես նրա խօսքը, այդ բոլորը յայտնի է...

—Ես էլ գիտեմ, որ քեզ յայտնի է, վրա բերեց նա։ Քեզ յայտնի է եւ այն, որ հոգաբարձութիւնը երկիւղ էր կրում վտանգաւոր միջամտութիւնից, որովհետեւ նրան «առաջադրել» էին այլ եւս չը խառնվել տեսչի ընտրութեան գործի մէջ։ Բայց դու չը գիտես այն, որ այժմ հոգեւոր իշխանութիւնը այդ սպառնալիքը թողել է եւ հոգաբարձութիւնը առաջվայ պէս ինքը պէտք է ընտրէ իր ցանկացած արժանաւոր անձին։

—Ի՞նչ ես ասում, բացականչեցի ես։ Ճիշտ որ այդ չը գիտէի։ Որքան ուրախալի է։ Որքան ուրախալի է։ Չէ, մի բան փոխվել է։ Մի ոսկեժպիտ չող է անցել Շողակաթում։

—Ես այդ չեմ կարծում, քմծիծաղով նկատեց Սարեկեանը։

—Բայց ինչով ես բացատրում այդ յանկարծակի փոփոխութիւնները։

—Ինչով, ծաղրեց Սարեկեանը։ Քո դիւրահաւատութեամբ։ Մի՞թէ մոռացել ես, բարեկամ, որ այսօր ապրիլի մէկն է։

—Ուրեմն։

—Այդ բոլորը կատակ է։ Իրականութիւնը նոյնն է։

Արդարեւ մի քանի ժամանակից յետոյ բերին մեզ համար հեռագիրներ, նամակներ՝ մէկը միւսից հրապուրիչ բովանդակութիւններով։

Բայց մենք գիտէինք, որ դրանք կատակներ էին եւ միայն հեռաքրքրվում էինք այն բանով, թէ ով ինչ իղձեր ունի մեր կեանքի զանազան երեւոյթների եւ խնդիրների վերաբերութեամբ։

Դուք էլ ստացած կը լինէք նոյնանման հեռագիրներ եւ նամակներ։ Դուք էլ ձեր երեւակայութեան մէջ ունէք հազար տեսակ իղձեր եւ տենչանքներ։

Մենք գործ ունենք սակայն իրականութեան հետ։

Վրթին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սոֆիայից յանձնարարութեամբ, Պետերբուրգի բոլգարական դիպլոմատիական ներկայացուցիչը յայտնեց ռուսաց կառավարութեանը բոլգարական կառավարութեան ցաւակցութիւնը մինիստր Սիպեագինի մահվան առիթով։

ՄԻՏԱՎԱ։ Միտավայի լատիշեան հասարակութիւնը վճռեց մի պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ՝ պսակ դնելու իր պատուաւոր անդամի, Կուրլեանդիայի նախկին նահանգապետ Սիպեագինի գերեզմանի վրա։

ԵՐԵՒԱՆ։ Միջնորդութիւն է յարուցված Երեւանում եւ Նախիջեւանում այգեգործական եւ մեղուաբուծական դպրոցներ բանալու մասին։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Mail» լրագիրը հաւատացնում է, որ Պրէտորիայում դրված են խաղաղութեան հիմքերը։ Բօէրները չը ներկայացրին պաշտօնական առաջարկութիւններ, իսկ Անգլիայի կողմից յայտարարվեց, որ անձնատուր եղող յաղթվածը ընդունում է յաղթողի պայմանները, որովհետեւ խօսքը դաշնագիր կապելու մասին չէ։ Դրանից յետոյ, երբ արդէն յայտարարված էր, որ Անգլիայի պայմանները անփոփոխ են, այդ պայմանները իր էական մասի մէջ ընդունեցին բօէրները։

ՐՕՏՏԷՐԴԱՄ։ «Neue Rotterdämische Courant» հաղորդում է վստահութիւն ներշնչող աղբիւրից, որ հիմք կայ դադարած համարել բանակցութիւնները, որովհետեւ հնարաւորութիւն չը կայ համաձայնութեան գալու։

ՀԱԱԳԱ։ Թագուհին հիւանդ է տիֆով։ Հիւանդութեան ընթացքը բնական է։

ՓՕԹԻ։ Փոթիից չորս վերստ հեռաւորութեամբ դուրս է գցված ծովափի ծանծաղուտի վրա «Պեստր Կարպով» շոգենաւը, որ դուրս էր եկել նաւահանգստից կէս գիշերին մօտ։ Մակոյկները անզօր են ծովային յուզմունքի դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Տվերից, Տոմսկից, Եկատերինօսլավից, Պէրմից, Մինսկից, Սեղլեցից եւ Կալուգայից հաղորդում են, որ հոգեհանգիստներ են կատարվել Դ. Ս. Սիպեագինի համար։

6 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մի քանի երկաթուղիներ եւ ջրային ճանապարհներ տեսնելու համար հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի ճանապարհ ընկնելու պատճառով, մինիստրութեան ընթացիկ գործերի կառավարութիւնը յանձնված է մինիստրի օգնական, գաղտնի խորհրդական Մեասօեդով-Իվանովին։—Տեղեկութիւններ են ստացված, որ հոգեհանգիստներ են կատարվել հանգուցեալ մինիստր Սիպեագինի համար Պլօցկում, Բորիսօգլէբսկում, Ասխաբադում եւ Նիկոլաեվում։

ՈՒՐԱԼՍԿ։ Անցեալ տարի խմիչքների եկամուտը չրջանում պակասեց 1900 թուի հետ համեմատած 35,485 բուբլիով։

ՄՕՍԿՎԱ։ Հրդեհաշիջային համաժողովը այն միտքը յայտնեց, թէ պէտք է մտցնել տեղական կօլլէգիալ հիմնարկութիւններ, որպէս զի կարելի լինի առաջն առնել գոյքերի չափազանցրած գնահատութեան. նոյնպէս ցանկութիւն յայտնեց, որ մաքսահարկեր չը վերցնվեն արտասահմանեան հրդեհաշիջային մեքենաներից։

ՆՈՎԻ-ՄԱՐԳԵԼԱՆ։ Երկու ժամին կէսօրից յետոյ լսվում էր ստորերկրեայ խուլ ձայն եւ զգացվում էր նշանաւոր ցնցումն։ Դժբաղդութիւններ չեղան։

ԼՕԴԶ։ Կալանաւորվեց մի կին, որը պարապում էր իր մօտ դաստիարակվող երեխաներին տանջելով։

ՀԱԱԳԱ։ Բօէրական պատուիրակ Վօլմարանս յայտնեց ռէպորտերին, թէ Հարաւային Աֆրիկայում խաղաղութեան բանակցութիւնների դադարեցման վերաբերմամբ իրան ոչինչ յայտնի չէ եւ թէ ինքն առհասարակ ոչինչ տեղեկութիւններ չունի բանակցութիւնների մասնրամասնութիւնների մասին։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Բալֆուր հաղորդում է, որ Միլնէր եւ Կիտչենէր, բօէրական պատուիրակների խնդիրքով, երկու խորհրդակցութիւն ունէին նրանց հետ։ Կիտչենէր մերժեց զինադադարը, համաձայնվելով հնարաւորութիւն տալ ընտրել բօէրական զանազան գնդերի ներկայացուցիչներին, որպէս զի նրանք միասին քննեն դրութիւնը։ Բօէրական պատուիրակները այդ նպատակով ճանապարհ ընկան Պրէտորիայից։

ԲՐԻՍՍԷԼ։ Սահմանադրութիւնը վերաքննելու համար եղած առաջարկութիւնը մերժվեց 84 ձայնով 64-ի դէմ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԱՄԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հարդէպ)

Ամենօր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Թարանեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաթերապիայ), վներ. և մորթու հ.

Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բուժչական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергіевская ул., д. 12.

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԷՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գէոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, ատառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան, յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնադրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դիմրցօվայա Նօմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։

94—100

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինեան փողոց, տ. № 15, բնակարան № 2. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պօպովի եւ Աբիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 74—100

ՄԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

որ տեղափոխվում է Մոսկվա, հարկաւոր է Մի ՀԱՅՈՒՀԻ, որ պարապէր հայերէնից փոքրիկ երեխայի հետ։

Հասցէն. Աբաս-Աբատսկայա հրապարակ, տուն Միրիմանովի, բնակարան Շահնազարեանցի։ 2—4

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԻ ԽՈՒՄԲ հրաւիրում է այն անձանց, որոնք ունեն ստացուածքի, առեւտրական կամ արդիւնագործական ցէնզ, մասնաւոր խորհրդակցութեան, որ պէտք է տեղի ունենայ այսօր, ապրիլի 7-ին, ժամի 12-ին, քաղաքային իդական ուսումնարանի ընակարանում, Աղամ Մուրադովի տանը, Հալաբարում, Բէգլեարովսկայա փողոցի վրա, առաջիկայ 1902—1906 քառամեակի համար ձայնաւորների թեկնածուների ցուցակ կազմելու։ 2—1

Լոյս տեսաւ

ՖԱՈՒՍՏ

Ողբերգութիւն Գէօթէի առաջին մասը. թարգմանեց գերմաներէնից

ԳԻՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ,

հեղինակի պատկերով եւ կարեւոր ծանօթութիւններով։ Շքեղ հրատարակութիւն։

Գինն է 2 ռուբլի

Վաճառվում է Կենտրոնական գրավաճառանոցում եւ թարգմանչի մօտ, Ելիզավետինսկայա փողոց, № 46։ 1—5

Ես մի նոր ձեւի ջրաղաց եմ հնարել եւ ներկայացրել ֆինանսների մինիստրութեանը ինձ արտօնութեան վկայական տալու համար։ Այս օրերս այդ վկայականը ստացայ եւ խնդրում եմ թոյլ տալ ինձ երկու խօսք ասել իմ գիւտի մասին։

Այս ձեւի ջրաղացը բոլոր արդէն գոյութիւն ունեցող ջրաղացների դէմ ունի այն առաւելութիւնը, որ նախ ոչ մի բարդութիւն չունի, միայն մի քանի հատարակ փայտէ անիւներ են ժողոված եւ նա այնքան ալիւր է արտադրում, ինչքան չոգիի աղացները. երկրորդ՝ շատ էժան է արժում, քան գիւղում գոյութիւն ունեցող ամենահասարակ ջրաղացները. եւ երրորդը, որ գլխաւորն է, բանում է առանց ջրի, չոգու եւ քամու օգնութեան։ Միայն մի ձի կամ եզ կամ գոմէշ կամ թէ հակառակ դէպքում մի մարդ կարող է նրան բանեցնել։

Մեր Կովկասում կամ ուրիշ երկիրներում կան գիւղեր, քաղաքներ, որոնք ջրից պակաս են կամ բոլորովին զուրկ են կամ մեծ նեղութիւններ են քաշում. եւ այս պատճառով նրանց մնում է կամ չոգիի աղաց ունենալ կամ քամու։ Գիւղական աղքատ ժողովուրդը պարզ է, որ չոգիի աղացի համար մտածել չէ կարող։ Քամու աղացն էլ այլ պակասութիւն ունի, որ երկարատեւ անգործութեան է դատապարտվում, երբ քամի չէ լինում։ Իմ հնարած ջրաղացը բոլոր այս պակասութիւնները լրացնում է։

Իմ հասցէն՝ Въ городъ Баку, Телефонная ул. домъ Егіазарова, молочная «Араксъ» Хачатуру Назарянцъ.

Խաչատուր Ե. Նազարեանց

1—1

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

փոխադրվել է Երեւանեան հրապարակ, տուն Գուրգենօվի (Սօլօլակսկայա փողոցի անկիւն)։ Ընդունում է հիւանդներին առաւօտեան 8—2, երեկոյեան 5—8 ժամին.

2—25

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ապրիլի 6-ին, ժամի 12-ին, նա նշանակել է աճուրդ՝ կապալով տալու աֆիշների 4 սիւներ, որոնք յարմարեցրած են առեւտրի համար։ Ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը բոլոր լի օրերը, ժամի 9 ից մինչեւ 3-ը Ուպրավայի 4-րդ բաժանմունքում։

3—2

ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ

ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐ ԵՒ ՍԻՐՈՂՆԵՐ,

որոնք կը ցանկային մասնակցել մի շարք հայկական ձրի ներկայացումների։ Սեզօնը սկսվելու է հոկտեմբերի 1-ից մինչեւ մեծ պասի առաջին շաբաթը։ Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով հայոց դրամատիկ. ընկերութեան անդամ Իշխ. Մարիամ Թումանեանին. Բարիատինսկայա № 8։ Ստորագրման հարկաւոր է յայտնել հետեւեալ տեղեկութիւնները. 1) անունը եւ ազգանունը, 2) մանրամասն հասցէն եւ 3) մօտաւորապէս ինչ տեսակ դերեր կը ցանկային յանձն առնել։ (կ.) 5—5

Մոսկվայի Արեւելեան լեզուների Լազարեան Ճեմարանի կողմից

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆԻ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՀԱՇԻՒԸ

1901 թ.

ՄՈՒՏՔ	% թղթեր	Առձեռն դրամ
Մնում էր ցմէկն յունվարի 1901 թ. . . .	81,250 ռուբլի	790 ր. 65 կ.
Մուտք է եղել յընթացս 1901 թ.	3,300 »	3,269 » 53 »
	84,550 ր.	4,060 ր. 18 կ.

ԵԼՔ

Ծախսված է % թղթեր գնելու համար 3,187 ր. 83 կ.
եւ 1900 թ. հաշիւ տպագրելու համար 19 ր. 92 կ.
Ընդամենը . . . . . 3,207 ր. 75 կ.
ցմէկն յունվարի 1902 թ. առձեռն կայ 84,550 ր. 852 ր. 43 կ.

Ծանօթութիւն. Ամբողջ դրամագլուխը գտնվում է Մոսկվայի Նահանգական գանձարանում եւ սկսած 1883 թ. 125 տարվայ ընթացքում պէտք է աճի մինչեւ 12 միլիոն ռուբլի գումարի. յետոյ պէտք է գործադրվի կտակողի անունով ուսումնարաններ եւ թաղեկներ հիմնելու համար։ 1—3

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են՝

ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. բժ., Վիրաբուժական հիւանդութիւն եւ օպերացիա, Պետերբ, 1902 թ. գ. 5 կ.
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ ԳԻՈՐԳ, թարգմ. գերմ., Գէօթէ—Ֆաուստ, հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1902 թ. գ. 2 ր.
ԷՖԻԿԵԱՆ Հ. Ս., Բնաշխարհիկ բառարան, պրակ չորրորդ, Վենետ. 1902 թ. գ. 1 ր. 50 կ.
ՆԱՐ-ԴՈՍ, Սպանված աղաւնին—վիպակ, Բագու, 1901 թ. գ. 30 կ.
ՓԱՓԱԶԵԱՆ Վ., Էմմա, վէպ ժամանակակից բարքերի, Թիֆլիս, անկազմ—1 ր., շքեղ կազմով—1 ր. 50 կ.
» խմբ., Վտակ, գրական-բանասիրական ժողովածու, անկազմ՝ 1 ր. 50 կ., կաշէկազմ՝ 1 ր. 90 կ. եւ շքեղ կազմով՝ 2 ր. 25 կ.
ՊԱՏԿԱՆԵԱՆ Ռ. (Գամառ-Քաթիպա), Բանաստեղծութիւններ—50 կ., շքեղ կազմով 1 ր. 25 կ.
» » Ընտիր երկասիրութիւններ, երկու հատոր, անկազմ 3 ր., շքեղ կազմով—4 ր.
ՄԽԻԹԱՐ, պատկերազարդ շքեղ հրատարակ., Վենետ. անկազմ 2 ր., շքեղ կազմով՝ 2 ր. 50 կ.
ԹՈՐՈՍԵԱՆ Հ. ՅՈՎՀ., Ընտիր Հայկազունք, բ. տիպ, պատկերներով, Վենետ. շքեղ կազմով՝ 3 ր.
ԱԲՈՎԵԱՆ Խ., Երկասիրութիւններ (Վէրք Հայաստանի եւ ուրիշներ), Մոսկ., անկազմ՝ 1 ր., շքեղ կազմով՝ 1 ր. 75 կ.

Նոյն տեղը ծախվում են եւ պարգեւատրութիւնների համար շքեղ կազմերով հայերէն եւ ռուսերէն ամեն հասակի համար գրքեր։

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 0—1

ՆՈՐ ԱԶԴ

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ ներկայ պրակը հրատարակած ժամանակ, կը փութանք յայտնելու յարգոյ բաժանորդաց, որ հինգերորդ պրակն ալ լոյս պիտի տեսնէ յուլիսի մէջ, նոյնպէս բազմաթիւ նորանոր պատկերներով զարդարուած։ Միեւնոյն ժամանակ կը յայտարարենք, թէ Բառարանիս տպագրուած 500 օրինակներն սպառած են, եւ բազմաթիւ բաժանորդ գրուիլ փափաքողաց խնդրանաց գոհացումն տալու նպատակաւ, Բառարանիս Ա. հատորն ատ տելէ վերջ՝ որ պիտի պարունակէ Ա—Հ տառը՝ միջին հաշուով 1000 էջ, երկրորդ հատորն պիտի տպենք 1500 օրինակ, 500-ը հին բաժանորդաց համար եւ 1000-ը նորերու։ Ուստի որոնք որ կը փափաքին Բառարանս ունենալ, կրնան այժմէն իսկ բաժանորդ գրուիլ Բ. հատորի պրակներուն, յայտնելով մեզ իրենց ճիշդ հասցէն, որ ըստ այնմ արձանագրենք մեր բաժանորդաց տետրի մէջ։ Բառարանիս Բ. հատորը անմիջապէս աւարտելէ վերջ, պիտի վերստին տպենք Ա. հատորը՝ նոր բաժանորդաց համար, որուն տպագրութիւնը կարելի է աւարտել մէկ տարուան շրջանի մէջ։ Նոր բաժանորդները փոխանակ դրամն այժմէն ուղարկելու, կրնան սպասել մեր նոր յայտարարութեան. այժմ բաւական է, որ բարեհաճին մեզ իմացնել իրենց հասցէն եւ թէ քանի օրինակ կուզեն ունենալ, որպէս զի ըստ այնմ տպագրելի օրինակաց թիւն չատացնենք կամ նուազեցնենք։

ՏԵՍԱՐԻԹԻՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

Հասցէ՝ Imprimerie Arménienne St. Lazare Venise (Italie). 2—3

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՎԷՐԼԻՉԵՎ ԵՒ ԿԱՄԻՆՄԱԽԷՐ“

որ իր տպարանական աշխատանքների համար Բաթումում արժանացել 1901 թուականի Կովկասեան յօբելեանական ցուցահանդէսի մէդալին, եւ «Тифлисскій Листокъ» լրագրի գովասանական կարծիքին (№ 277 1901 թուականի) յայտնում է, որ բացել է Թիֆլիսում, Միխայլովսկայա եւ Նէյմեցկայա փողոցների անկիւնում, Սլիվիցկու տանը

ՏՊԱՐԱՆ ԵՒ ՏՈՂԱՐԱՆ

որոնք կազմակերպված լինելով տեխնիկայի վերջին պահանջների համեմատ, հնարաւորութիւն կունենան կատարել ամեն տեսակ տպարանական եւ տողային աշխատանքներ բոլոր եւրոպական եւ տեղական լեզուներով

ԳԵՂԵՑԻԿ, ՇՈՒՏ ԵՒ ԷԺԱՆ

Տպարանի գրասենեակը բաց է մարտի 23-ից ամենայն օր։ Որպէս զի պատուէր տուողները զատվեն իրար ժամանակ կորցնելուց՝ տպարան այցելելու համար, «Վէրէիչեվ եւ Կամինմախէր» ընկերութիւնը ունի մի խումբ ծառայողներ, որոնք կարող են դալ պատուէր տուողների տները՝ պատուէրներ ընդունելու համար։ 7—10

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ապրիլի 4-ից (1902 թ.) բաց է անում Թիֆլիսում ԿԱԽԷԹԻ ԳԻՆԻՆԵՐԻ յատուկ վաճառք՝ չիշը 30 կօպէկից եւ վերջոն 4 ռուբլուց սկսած։

Մեծ քանակութեամբ գնողներին եւ մշտական սպառողներին զիջումն կը լինի։ Պատուէրները, ոչ պակաս քան 10 չիշի, տուն կուղարկվեն ձրի։

Գինիները կը ստացվեն Կախէթի սեփական այգիներից, որոնք գտնվում են Բակուրիանի եւ գիւղում, եւ Կախէթի կալուածատէրերի լաւագոյն այգիներից. հսկողութիւնը գինիների վրա եւ ընդհանրապէս այս գործի ղեկավարութիւնը յանձնվում է հմուտ գինեգործ-մասնագէտի։

ՎԱՃԱՌՈՒՄԸ ԿԸ ԼԻՆԻ

Թիֆլիսում. 1) Օպտօվի պահեստում (Գօլօվինսկի պրօսպէկտ, տուն Դօբրժանսկու, արքունական թատրոնի դիմացը). 2) № 1 Դէպօում (Դվօրցօվայա փողոց, սեփական տուն). 3) № 2 Դէպօում (Վօրոնցօվի հրապարակ, տուն Նարիմանովի), 4) Թիֆլիսի լաւագոյն կերակրախանութներում։

Բագուում. սեփական պահեստում։ 2—4

(Ապ. 4, 7, 14, 28)

Дозволено Цензурою, Тифлисъ, 6 Апрѣля 1902 г. Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.